ՕԳՆՈՒԹԻՒՆ ԱՐՑԱԽԻՆ ԵՒ ԱՂԷՏԻ ԳՕՏՈՒՆ

Երեւան հասան Գերմանիայի Հայ Օգնութեան Կենտրոնի երկու բեռնատար աւտոմեքենաները, որոնց ուղեկցում էր կենտրոնի ղեկավար Յակոբ Ծամպազեանը: Սա նրա առաջին այցելութիւնը չէ Հայաստան: Երկրաշարժից յետոյ մեր հայրենակիցը բազմիցս օգնութիւն է բերել աղէտի գօտու եւ Արցախի համար:

Այս անգամ Գերմանիայից տեղ հասած բեռը մօտ 40 տոննա է, այդ թւում մսի պահածոյ, բրինձ, կաթի փոշի, շաքար, պտղանուշ (ջեմ), կարի մեքենայ, հագուստ եւ կօշկեղէն: Հաշմանդամների համար բերել են նաեւ ձեռնափայտեր, անուաթոռներ, հիւանդանոցներին՝ դեղամիջոցներ, բժշկական սարքաւորումներ:

Այս օգնութիւնից անմասն չի մնայ նաեւ Արցախի հայութիւնը: Նրանց համար նախատեսուած է 6 ալրաղաց, 5 կարի մեքենայ, 3 արկղ կօշիկ եւ հագուստեղէն:

Հայ Օգնութեան Կենտրոնը սննդամթերքից, հագուստեղէնից եւ դեղամիջոցներից զատ չի մոռացել ուղարկել նաեւ գրքեր՝ 284 արկղ (իւրաքանչիւրում 40 օրինակ) Նոր Կտակարան:

Յակոբ Ծամպազեանն ասաց, որ նմանատիպ օգնութիւն է պատրաստում Հայ Օգնութեան Կենտրոնի ԱՄՆԻ մասնաճիւղը:

Մեր հայրենակիցները կարողութիւն եւ ժամանակ չեն խնայում հայրենիքին օգնելու համար, իսկ մենք պարտաւոր ենք կազմակերպուած, առանց քաշքշուկների ընդունել այդ օգնութիւնը եւ հասցնենք հասցէատէրերին: